

ԼՈՒՄԻՆԵ ՄԱՀԱԿՅԱՆ,  
ԴԻԱՆԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԳԻՐԻ  
ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԸՆԴԳՐԿՈՒՄՆԵՐԸ

*Բանալի բառեր – տարեգիրք, սալնամե, թանգիմաթ, վիճակագրություն, Օսմանյան կայսրություն*

Օսմանյան կայսրության դիվանական նյութերի մեջ աղբյուրագիտական կարևոր արժեք են ներկայացնում սալնամեները, որոնք կիրառության մեջ են XIX դարի 40-ական թվականներից: Սալնամե (Sâlnâme) բառը ունի պարսկական ծագում և թարգմանաբար նշանակում է «տարեգիրք» (sal-տարի, name-գիրք): Թուրքիայի Հանրապետությունում հրատարակված սալնամեները ստացել են «յըլլըք» (Yıllık)<sup>1</sup> անվանումը: Արևմտյան լեզուներում սալնամեին համարժեք են “Annuaire”, “Annus”, “Almanach”, “Year Book” անվանումներով գրքերը<sup>2</sup>:

Սալնամեները փոխարինեցին օսմանյան աշխարհագիր մատյաններին<sup>3</sup> բովանդակային առումով որոշակի տարբերություններով և հավելումներով, առավել ընդլայնված թեմատիկ ընդգրկումներով: Սալնամեներում մեկ տարվա կտրվածքով գրանցվում էին տեղեկություններ զանազան՝ առևտրին, գյուղատնտեսությանը, հողագործությանը, տնտեսությանը, զիտությանը, արվեստին, պատմությանը, պետական պաշտոնյաներին առնչվող իրադարձությունների մասին, ինչպես նաև՝ ըստ նահանգների և գավառների՝ բնակչության վիճակագրությունը ներկայացնող աղյուսակներ: Իբրև վավերագրեր որակվող սալնամեները դասվել են սկզբնաղբյուրների թվում<sup>4</sup>:

Հարկ է նկատել, որ օսմանյան սալնամեների համար որպես նախատիպ ծառայել են եվրոպական տարեգրքերը, որոնցից առաջինները լույս են տեսել

<sup>1</sup> Տե՛ս **Duman H.**, Osmanlı Salnameleri ve Nevsalleri Bibliografisi ve Toplu Kataloğu, Ankara, 1999, c. 1, s. 1:

<sup>2</sup> Տե՛ս **Kahraman S. A.**, İlimiye Salnamesi, İstanbul, 1998, s. 12:

<sup>3</sup> Օսմանյան աշխարհագիր մատյանների մասին մանրամասն տե՛ս **Մահակյան Լ.**, Բարձր Հայքի, Բաբերդ, Սպեր, Դերջան գավառների տեղանուններն ու ժողովրդագրությունը XVI դարի օսմանյան աշխարհագիր մատյաններում, Երևան, 2007, էջ 4-76:

<sup>4</sup> Տե՛ս **Միլլանօղլու Ջ.**, Հայկական տարեգրքեր // <http://akunq.net/am/?p=9108>

XV դարում նախ Վիեննայում, իսկ ավելի ուշ՝ Հունգարիայում: 1448 թ. Գերմանիայում տպագրվել է «Ալմանախ» («Almanach») վերնագրով տարեգիրքը: XVI դարից ի վեր վեց ամիս պարբերականությամբ տարեգրքեր են հրատարակվել Քյոլն քաղաքում<sup>1</sup>: Ժամանակի ընթացքում Արևմուտքում այս մատյանների կազմման և տպագրության ձևը կատարելագործվում է՝ ներառելով նաև պետական և հասարակական կյանքի տարբեր ոլորտների նկարագրությունները: Տարեգրքերում արձանագրվում էին մեծ և փոքր իրադարձություններին վերաբերող մանրամասն տեղեկություններ:

Հատկապես օսմանյան տարեգրքերի համար օրինակ է ծառայել 1763 թվականից Գերմանիայի Գոթա (Gotha) քաղաքում գերմաներեն, իսկ ավելի ուշ ֆրանսերեն տպագրվող՝ «Գոթայի ալմանախ» («Almanach de Gotha») տարեգիրքը, որն աղյուսակների տեսքով ներառում էր նաև դիվանագիտական ծառայության մեջ գտնվող անձանց անունները: Օսմանյան տարեգրքերի կազմումն ու տպագրությունը սկսվեցին XIX դարում՝ թանգիմաթյան բարեփոխումներից անմիջապես հետո: 1839 թ. Գյուլհանեյի հաթթը շերիֆով երկրում հայտարարվեց բարեփոխումների՝ թանգիմաթի ժամանակաշրջան, որը հետապնդում էր երկրի արևմտականացման նպատակներ: Բարեփոխումներ էին նախատեսվում տարբեր ոլորտներում, այդ թվում՝ կառավարման և վարչական համակարգերում և վարչական գրագրության մեջ: Հենց այդ ժամանակահատվածում շրջանառության մեջ մտան օսմանյան տարեգրքերը:

Սադրագամ Ռեշիդ փաշայի նախաձեռնությամբ 1847 թ. տպագրվում է Օսմանյան կայսրության առաջին՝ «Օսմանյան պետության սալնամե» («Sâlnâme-i Devlet-i Aliyye-i Osmaniyye»)<sup>2</sup> խորագրով տարեգիրքը: Արևմուտքում այն մեծ արձագանք է ստանում և նույն թվականին ֆրանսերեն թարգմանությամբ նախ մաս-մաս հրատարակվում է «Ժուռնալ ազիատիկ» («*Journal asiatique*») պարբերականում, իսկ փոքր անց՝ 1848 թ., Փարիզում լույս է ընծայվում դրա ամբողջական թարգմանությունը<sup>3</sup>:

Օսմանյան առաջին պետական սալնամեի հրատարակության նախապատրաստական աշխատանքներն անձամբ իրականացնում էր Ահմեդ Վեֆիք փաշան, որը հայտնի պետական գործիչ էր, դիվանագետ, թարգմանիչ, նախարարների առաջին խորհրդի Ստամբուլի պատգամավոր: Երկու անգամ նա նաև զբաղեցրել է կրթության նախարարի, իսկ 1878-1882 թթ. վարչապետի պաշտոնները: Ահմեդ Վեֆիք փաշան միաժամանակ համարվում է թուրքիզմի գաղափարախոսության և՛ հայրերից, և՛ մշակողներից մեկը<sup>4</sup>:

<sup>1</sup> Տե՛ս **Ertuğ H. R.**, Osmanlı Devrinde Salnameler, Hayat Tarih Mecmuası, Sayı 7, İstanbul, 1973, s. 15:

<sup>2</sup> Տե՛ս **Duman H.**, նշվ. աշխ., էջ 53:

<sup>3</sup> Le premier annuaire impérial de l'Empire Ottoman où Tableau de l'état politique civil, militaire, judiciaire et administratif de la Turquie, Paris, 1848.

<sup>4</sup> Նրա գործունեության մասին տե՛ս **Մաֆայան Ա.**, Զիյա Գյոքալպը և «Թյուրքականության հիմունքները», Երևան, 2012, էջ 150-153:

Առաջին սալնամեի նախաբանում նկարագրվում են տարեգրքի ստեղծման հիմնական նպատակները: Գրագրությունը կազմվել է աղյուսակների տեսքով, որոնցում տեղ են գտնել պետական այրերի՝ նախարարների, դեսպանների, նահանգներում գտնվող վեզիրների և ծառայողների անուններն ու պաշտոնները: Արտաքին աշխարհի մասին տեղեկատվություն ապահովելու նպատակով ընդգրկվում են եվրոպական պետությունների տիրակալների և նախարարների վերաբերյալ ամփոփ աղյուսակներ: Առանձին բաժնում հստակեցված են օրացույցը, տարբեր կրոնների տոնական, ծիսական կարևոր արարողությունների օրերը: Եվրոպական երկրներ ճամփորդելու ծախսերը հաշվարկելու նպատակով տրվում են նաև դրամական միավորների փոխարժեքները, ներկայացված է դրամահատարանի համակարգը: Տեղեկություններ կան կայսրության մեջ գործարկվող օսմանյան և օտար շոգենավերի ժամացուցակի, պետությունների և քաղաքների միջև հեռավորությունների մասին: Ինչպես նշում է Ահմեդ Վեֆիք փաշան, առաջին տարեգիրքը «թեև շատ հեռու է կատարյալ լինելուց, բայց մեծ ցանկության և աշխատանքի դեպքում իհարկե կկատարելագործվի»<sup>1</sup>:

1847 թ. առաջին տարեգրքի հրատարակումից հետո 1848 թ. և 1849 թ. տարեգրքերում գրանցվեցին բոլոր էյալեթների (նահանգ), կազաների (ավան), նահիլեների (գյուղախումբ) հողային բաժանումների, մուսուլման և ոչ մուսուլման բնակչության վիճակագրական աղյուսակները, ոչ մուսուլման հոգևոր առաջնորդների անունները, ինչպես նաև նամազի ժամանակացույցը և նկարները<sup>2</sup>:

Չնայած սալնամեների մեծ մասը պատրաստվել և հրատարակվել է օսմանյան իշխանությունների կառավարման ժամանակ, այդուհանդերձ Թուրքիայի Հանրապետության առաջին տարիներին ևս կիրառվել է դրանց կազմման ավանդույթը:

Բոլոր սալնամեները ներառում են նաև պատմական, տնտեսական, աշխարհագրական, վարչական, անձնական-կենսագրական, ինչպես նաև բանակի, նավատորմի, կրթության, մշակույթի և այլ կարևոր ոլորտների իրադարձություններին առնչվող տվյալներ, այդ թվում՝ փոստային վարձավճարի չափը, բազմաթիվ կամուրջների գծագրերը, քաղաքների հատակագծերն ու քարտեզները, մեծաթիվ տարբերանշաններ, դրոշներ, մեդալներ: Ուստի տարեգրքերը կարևոր սկզբնաղբյուր են նաև XIX-XX դդ. քաղաքների պատմության ուսումնասիրության համար<sup>3</sup>: Նշենք, որ սալնամեների կազմման աշխատանքներն ու տպագրությունն անմիջապես վերահսկում էր պետությունը:

---

<sup>1</sup> Ertuğ H. R., նշվ. աշխ., էջ 16:

<sup>2</sup> Տե՛ս Aydin B., նշվ. աշխ., էջ 52-54:

<sup>3</sup> Տե՛ս Emiroğlu K., Ankara Vilayeti Salnâme, - i Resimsi 1325 (1907), Ankara, 1995, s. 10:

Բացի ընդհանուր պետական սալնամեններից՝ յուրաքանչյուր գերատեսչություն կազմում էր նաև իր բնագավառին վերաբերող տարեգրքեր, ինչպիսին էր՝ «Զինվորական տարեգիրքը» (“Sâlnâme-i Askerî”), որը սկսել է հրատարակվել Քեչեիզադե Ֆուաթ փաշայի՝ գլխավոր հրամանատար նշանակվելու ժամանակաշրջանից ի վեր: 1864-1880 թթ. լույս տեսած 17 «Զինվորական տարեգրքերում» գրանցվում էին նախ ռազմածովային ուժերի անձնակազմը, բանակային միավորումները, այդ թվում՝ սպայական անձնակազմը, դրանց տարբերանշանները, երբեմն՝ որոշ վիճակագրական տեղեկություններ:

Ռազմածովային նավատորմի նախարարությունը ևս տպագրում էր «Ռազմածովային նավատորմի տարեգիրքը» (“Bahriye Sâlnâmeleri”), որում արձանագրվում էին նախարարությանը կից բոլոր կազմակերպությունները՝ իրենց ամբողջ անձնակազմով՝ ըստ զբաղեցրած պաշտոնների և աստիճանների: Ռազմածովային նախարարությունը տպագրում էր նաև գիտությանը վերաբերող տարեգրքեր, կատարում էվրոպական տարեգրքերի թարգմանություն և տպագրություն. օրինակ՝ Անգլիայի աստղադիտարանի գիտական տարեգրքերը թարգմանվում և լույս էին տեսում «Նավատորմի օրացույց» (“Takvim-i Bahri”) խորագրով:

Արտաքին գործերի նախարարության նախաձեռնությամբ ևս սկսեցին տպագրվել «Արտաքին գործերի տարեգիրք» (“Hâriciye Sâlnâmesi”) խորագրով մատյանները: Նշենք, որ դեռևս սուլթան Սուլեյման Կանունիի օրոք (1520-1566) լույս է տեսել նմանատիպ չորս տարեգիրք, որոնցում ընդգրկված նյութերը ներկայացնում էին օտարերկրյա և թուրք դեսպանների, այդ ժամանակաշրջանի արտաքին գործերի նախարարների և նախարարությանը ենթակա կազմակերպությունների գործունեությունը, ինչպես նաև պաշտոնական փաստաթղթեր և պայմանագրեր:

Շեյխ-ուլ իսլամի ղեկավարությամբ կազմվում էին և հրատարակվում նաև «Գիտական տարեգրքեր» (“İlmiye Sâlnâmesi”), որոնք մեծապես վերաբերում էին կրոնին: Այս մատյաններում երբեմն տեղ էին գտնում նաև շեյխ-ուլ իսլամների հրամանները (fetva): Գիտության տարեգրքերին զուգահեռ՝ Աստղադիտարանի ղեկավարության՝ Կոմբարի և բժիշկ հազարապետ Սաիդ էֆենդիի նախաձեռնությամբ լույս էին ընծայվում նաև հիմնականում ֆրանսերենից թարգմանված տարեգրքեր, որոնցից պահպանվել է միայն 1872 թ. տպագրվածը:

Կրթության նախարարությունը ևս հրատարակում էր իր՝ «Կրթության նախարարության տարեգիրք»-ը (“Maârif Sâlnâmesi”), որն ամփոփում էր կրթության նախարարության պատմությանը, նախարարներին և առհասարակ նախարարության անձնակազմին վերաբերող տեղեկություններ, ինչպես նաև փաստաթղթեր և տեղեկություններ նախարարությանը և այլ հաստատություններին ենթակա դպրոցների մասին: Պահպանվել են նաև նախարարության կանոնադրությունը, ցուցումները և ծրագրերը:

Ֆինանսների նախարարությանը ենթակա հարկային գերատեսչությունը ևս հրատարակում էր «Հարկային տարեգրքեր» (“Rusûmat Sâlnâmesi”): Այս մատյաններում տեղ էին գտնում հարկային գործերին, հատկապես մաքսատներին, գերատեսչության աշխատակազմին, ենթակա ստորաբաժանումներին, անցկացվող բարեփոխումներին, մաքսային վճարներին և տարբեր հրահանգներին ու ցուցումներին վերաբերող մանրամասն տեղեկատվություններ<sup>1</sup>:

Սալնամեներին զուգահեռ՝ Օսմանյան կայսրությունում սկսեցին լույս տեսնել նաև թաքվիմ (Takvim) և նևսալ (Nevsâl) անունները կրող տեղեկատուներ: Թաքվիմում (օրացույց, որը բովանդակային առումով նման էր եվրոպական արմատախներին) մանրամասն ներկայացվում էին շաբաթվա օրերի ծեսերի, տարվա եղանակների, նոր տարվա և տոնական օրերի մասին տեղեկություններ: Այն ներառում էր նաև ժողովրդի հետ շփվելու անհրաժեշտությունից ի հայտ եկած վարչական և առողջապահական, ինչպես նաև ժամանցային խաղերին, կենցաղային խորհուրդներին վերաբերող տեղեկություններ, որոնց կողքին հրապարակվում էին պատմվածքներ, երգիծական նկարներով մանրապատումներ<sup>2</sup>:

Նևսալը, որը ևս պարսկական ծագում ունի և թարգմանաբար նշանակում է Նոր տարի, ընդգրկում էր<sup>3</sup> սալնամեներից դուրս մնացած տեղեկությունները: Պահպանվել են 1880-1925 թթ. ընթացքում տարբեր պետական և մասնավոր կազմակերպությունների հրատարակած շուրջ հիսունհինգ նևսալներ:

Օսմանյան սալնամեները, ըստ բովանդակության և ընդգրկումների, բաժանվում են հետևյալ տեսակների՝

1. պետական (Devlet Salnâme),
2. նահանգային (Vilayet Salnâme),
3. հասարակական/մասնավոր խորհուրդներին և անձանց ու կազմակերպություններին պատկանող (Özel Konulu veya Kişi ve Kuruluşlara Ait Salnâme),
4. պետական խորհուրդներին և մասնավոր կազմակերպություններին պատկանող նևսալներ (Resmi veya Özel Kurum Kuruluşlara Ait Nevsâller),
5. օրացույցներ (Takvimler):

Ա. Մութաֆի բնորոշմամբ՝ այս գրքերը, որոնք համարվում են նաև պետության և քաղաքի արժույթներ, իրենց բովանդակային ընդգրկումով Օսման-

---

<sup>1</sup> Տե՛ս **Sütçü T.**, Sosyal Bilimlerde Araştırma Kaynağı Olarak Almanaklar, Sâlnâmeler, Yıllıklar, İlmi Araştırmalar, Sayı 18, İstanbul, 2004, s. 79-92:

<sup>2</sup> Տե՛ս **Karaman F.**, Salnâme, - i Vilayet-i Sivas (1308/1890), İstanbul, 2001, s. 9:

<sup>3</sup> Տե՛ս **Duman H.**, նշվ. աշխ., էջ 17:

յան կայսրության «ողնաշարն» էին<sup>1</sup>:

1846-1880 թթ. սալնամեները լույս են ընծայվել լիտոգրաֆիական (վիմագրություն), իսկ սկսած 1881 թ.՝ մեքենագրական եղանակով: Այս կարևոր սկզբնաղբյուրները գրվել են օսմաներեն, հաճախ կազմվել երկլեզու՝ թուրքերեն-արաբերեն, թուրքերեն-ֆրանսերեն, ինչպես նաև՝ ռումիներեն, հայերեն, հայաստառ թուրքերեն, հունարեն:

Այսպիսով, սալնամե և նևսալ խորագրերը կրող տարեգրքերը պաշտոնյաների, արտաքին և ներքին օղակների մասին, կառավարողների և հպատակների միջև հաղորդակցություն ապահովելու նպատակով կազմված և մեկ տարվա իրադարձությունները ներառող խորհրդատվական, վիճակագրական սկզբնաղբյուրներ էին: Օսմանյան այս տարեգրքերը կարևոր նյութ են մատուցում կայսրության պատմության տարբեր բնագավառների՝ վարչական բաժանումների, ժողովրդագրության, տեղանվանագիտության, քարտեզագրության, հարկային համակարգի, սոցիալ-տնտեսական հարաբերությունների, մշակույթի և գիտության ուսումնասիրության համար:

**Лусине Саакян, Диана Айрапетян – Типы и содержание ежегодников Османской империи**

В данной статье обобщены османские ежегодники – салнаме, которые издавались с 40-х годов XIX столетия до начала XX века. Были выделены типы ежегодников, дано краткое описание содержания салнаме, а также отмечена историковедческая значимость данных ежегодников. Важно отметить, что османские ежегодники были составлены правительством, и каждое ведомство публиковало свои ежегодники, которые содержали важные события года, включая политическую, культурную сферу, а также подробную информацию о соответствующих департаментах, науке, торговле, сельском хозяйстве, экономике, истории, государственных должностях и статистике населения.

**Lusine Sahakyan, Diana Hayrapetyan – The Ottoman Yearbooks: Types and Contents**

This article summarizes the Ottoman yearbooks – salname, which were published from the 40's of the XIX century to the beginning of the XX century. In the framework of the article an attempt was made to single out the types, the main content, the brief description of salname, as well as the importance of these yearbooks as valuable source for historical research. It is important to note that the Ottoman yearbooks were compiled by the government and each department separately published its yearbooks that contained important events of one year, including the political and cultural sphere, as well as detailed information on relevant departments, science, commerce, agriculture, economy, history, government posts and population statistics.

---

<sup>1</sup> Տե՛ս **Mutaf A.**, Salnamelerde Karesi Sancağı (1847-1922), Balıkesir, 1997, s. 5: